

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2014

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2013 թվականին
կատարված աշխատանքների մասին**

Նախաբան

2013 թվականին ԼՂՀ-ում իրականացվող ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր կայուն տնտեսական աճի տեմպերի ապահովմանը, տնտեսության զարգացմանն ուղղված մեկնարկած բարեփոխումների և առաջնահերթ միջոցառումների իրականացմանը, պետական միջոցների արդյունավետ, նպատակային և թափանցիկ ծախսմանը:

2013 թվականի համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ) կազմել է 168.6 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի տեմպ 9.3 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1137.9 հազ. դրամ՝ 2012 թվականի 1023.0 հազ. դրամի դիմաց:

| Ցուցանիշը | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|---|----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| Անվանական ՀՆԱ (մլն դրամ) | 87,148.1 | 102,338.7 | 118,187.2 | 135,498.5 | 150,015.7 | 168,563.6 |
| ՀՆԱ-ի իրական աճ (%) | 14.3 | 13.1 | 5.5 | 9.1 | 9.9 | 9.3 |
| ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ) | 623.1 | 723.7 | 823.2 | 936.1 | 1,023.0 | 1,137.9 |
| Արդյունաբերության իրական աճ (%) | 111.6 | 115.6 | 105.3 | 100.8 | 99.2 | 110.0 |
| Գյուղատնտեսության իրական աճ (%) | 125.4 | 101.1 | 88.7 | 120.1 | 123.9 | 109.2 |
| Շինարարության աճ (%) | 124.2 | 133.5 | 124.0 | 101.4 | 87.4 | 118.1 |
| Պետական բյուջեի սեփական եկամուտներ (մլն դրամ) | 19,911.7 | 21,250.8 | 23,807.5 | 25,756.4 | 28,755.6 | 27,919.3 |
| Պետական բյուջեի ծախսեր (մլն դրամ) | 50,074.7 | 55,098.5 | 62,182.4 | 67,377.0 | 67,343.8 | 69,623.2 |

Հաշվետու տարվա պետական բյուջեի եկամուտները կազմել են 27,919.3 մլն դրամ, ընդ որում՝ հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 18,291.6 մլն դրամ:

2013 թվականի պետական բյուջեն հաջողվել է կատարել առանց ծախսերի գծով ընթացիկ պարտքերի էական կուտակման: Բոլոր հիմնավորված պարտավորությունները, որոնք ստանձնվել են պետական մարմինների կողմից,

Ֆինանսավորվել են նախատեսված չափերով: Պետական բյուջեով նախատեսված ծրագրերը հիմնականում իրականացվել են նախանշված ծավալներով՝ ապահովելով ակնկալվող արդյունքները: Հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 69,623.2 մլն դրամ:

2013 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նաև Նախարարություն) գործունեությունն ուղղված էր ԼՂՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԼՂՀ կառավարության գործունեության և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

Բյուջետային քաղաքականություն

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված է եղել բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացների իրականացմանը:

«ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների համաձայն աշխատանքներ են կատարվել պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների, տարիֆիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2013 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Ուսումնասիրվել, ստուգվել և համաձայնություն է տրվել պետական պատվերի և վճարովի ծառայությունների գծով կիրառվող նորմատիվների և միջինացված գների վերաբերյալ:

ԼՂՀ վարչապետի 2013 թվականի հունիսի 3-ի «ԼՂՀ 2014 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 224-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները: Մշակվել են ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2014 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումները:

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն կազմվել են նաև 2014 թվականի համայնքների բյուջեների նախագծերի մշակման և ԼՂՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները:

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

ա/ պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2014 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

բ/ Ստեփանակերտի քաղաքապետարանից և շրջանների տարածքում տեղաբաշխված համայնքներից ստացված ԼՂՀ պետական բյուջեից դոտացիա ստանալու 2014 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

գ/ ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել են «ԼՂՀ 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը», «ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը և նախագծի բացատրագիրը ու ներկայացվել ԼՂՀ կառավարության քննարկմանը:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում, պատգամավորական խմբակցություններում «ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի քննարկումներին:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն մշակվել է ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի ու «ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատրաստվել են ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ կառավարության թվով 8 որոշումների նախագծեր:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից ԼՂՀ կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով բյուջետային միջոցների վերաբաշխումների հաշվառումը:

Բյուջետային ոլորտում փոխշահավետ համագործակցությունը զարգացնելու և խորացնելու, ինչպես նաև տնտեսական և ֆինանսական կառավարման ոլորտում կարողությունների զարգացման նպատակով 2013 թվականին ՀՀ և ԼՂՀ կառավարությունների անունից ՀՀ ֆինանսների ու ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարների միջև կնքվել է շրջանակային համաձայնագիր:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող ԼՂՀ օրենքների, ԼՂՀ Նախագահի հրամանագրի, ԼՂՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի վերաբերյալ տրվել են համապատասխան առաջարկություններ:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած

շահույթի բաշխման նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ զուտ շահույթի օգտագործման ուղղությամբ: 2012 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքով ստացված զուտ շահույթից պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինների չափերի վերաբերյալ պատրաստվել է ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2013 թվականի հուլիսի 23-ին:

Նախարարության ամենօրյա ուշադրության և հսկողության կենտրոնում են գտնվել արտաբյուջետային մուտքերի համակարգման, հաշվառման և հրատապ ծրագրերի իրականացմանը նպատակաուղղված ֆինանսավորման գործընթացները:

2013 թվականին ներգրավված փոխառու միջոցներից 15,388.9 մլն դրամը ուղղվել է ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանը: Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման նպատակով կնքված պայմանագրերի համաձայն 2013 թվականին տրամադրվել է 1,634.4 մլն դրամի տոկոսավճար, ինչպես նաև մարվել է նախորդ տարիների փոխառությունների գումարը՝ 12,947.6 մլն դրամ:

ԼՂՀ կառավարության մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվում 2013 թվականին նպատակային ծրագրերի իրականացման համար ստացվել է 6,216.4 հազ. ԱՄՆ դոլար: Ստացված միջոցներից նույն ժամանակահատվածում քաղաքաշինության, կրթության և առողջապահության բնագավառներում նպատակային ծրագրերի համար ֆինանսավորվել է 7,099.8 հազ. ԱՄՆ դոլար:

Մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել են ամենամսյա հաշվետվություններ:

Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության միասնական և արդարացի համակարգ ներդնելու, պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի հիմնավորված տարբերակում և պետական ծառայության տարբեր ոլորտներում աշխատավարձերի սանդղակների համադրելիություն ապահովելու, ինչպես նաև վարձատրության հետ կապված այլ հարաբերությունները կանոնակարգելու նպատակով մշակվել և ԼՂՀ Ազգային Ժողովի ընդունմանն է ներկայացվել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»

ԼՂՀ օրենքի և դրանից բխող մի շարք օրենքների նախագծերի փաթեթը: Նշված օրենագծերի փաթեթը բազմակողմանի քննարկվել է ԼՂՀ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովներում, պատգամավորական խումբ-խմբակցություններում տարբեր ձևաչափերով և ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 28-ին:

Գանձապետական համակարգ

2013 թվականին գանձապետական համակարգի ոլորտում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատանքներն ուղղված են եղել ինչպես ԼՂՀ պետական բյուջեի համաչափ և սահուն կատարման ապահովմանը, այնպես էլ համակարգի զարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Ամբողջ ծավալով և առանց ուշացումների վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, կենսաթոշակները, նպաստները, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 448 իրավաբանական անձանց (47 պետական կառավարման մարմին, 227 տեղական ինքնակառավարման մարմին, 18 բյուջետային հիմնարկ, 139 պետական ոչ առևտրային կազմակերպություն, 16 փակ բաժնետիրական ընկերություն և 1 այլ հիմնարկ) 6115 գանձապետական հաշիվներով, որից 1769` պետական բյուջեի, 4166` համայնքային բյուջեների, 180` արտաբյուջետային գործառնությունների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԼՂՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել և ճշտության դեպքում իրականացվել է ֆինանսավորումը,

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը

կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել կատարումը վերջիններիս կողմից,

➤ պետական և համայնքային բյուջեների կատարման ընթացքում նախնական հսկողություն է իրականացվել բյուջետային հիմնարկների կողմից կատարվող վճարումների ճշտության և նպատակայնության նկատմամբ,

➤ պատրաստվել են ամենօրյա և ամենամսյա տեղեկություններ պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման մասին,

➤ կազմվել է ամենամսյա տեղեկատվություն ԼՂՀ պետական բյուջեի կատարողականի մասին (գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ) և սահմանված ժամկետում ներկայացվել է ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայությանը,

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցելու նկատմամբ,

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկություններից, տեղական գանձապետական բաժիններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են 2012 թվականի պետական բյուջեի, 2013 թվականի առաջին եռամսյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա պետական բյուջեի կատարման հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ԼՂՀ պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները, պատրաստվել են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի «ԼՂՀ պետական բյուջեի կատարման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծերը և դրանք սահմանված ժամկետներում ներկայացվել են ԼՂՀ կառավարություն,

➤ մասնակցություն է ապահովվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական գործող հանձնաժողովներում ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման մասին հաշվետվության քննարկումներին,

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո ԼՂՀ պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է մամուլում հրապարակման համար,

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հոդվածներում: Տարվա ընթացքում մուտքագրվել է 263 գրություն՝ ծախսերի հոդվածային փոփոխություն կատարելու խնդրանքով, որոնցից բավարարվել է 248-ը,

➤ ԼՂՀ պետական կառավարման մարմինների 47 գրության հիման վրա նրանց կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները,

➤ կատարվել է քաղաքացիների ընդունելություն՝ հիմնականում նրանց կողմից պետական և համայնքային բյուջեներ, իրավաբանական անձանց կողմից մատուցված ծառայությունների դիմաց սխալմամբ կամ ավել վճարած, ինչպես նաև ծառայությունների կատարումը մերժելու դեպքում վճարած պետական տուրքի գումարի վերադարձման հարցերով: Ընդունվել է 113 դիմում, որից բավարարվել են 110-ը,

➤ 2013 թվականի դեկտեմբերի 17-ին հրավիրվել է խորհրդակցություն շրջանների գանձապետական բաժինների պետերի մասնակցությամբ, որտեղ քննարկվել են պետական և համայնքային բյուջեների կատարման հարցերը, ինչպես նաև մինչև տարեվերջ համայնքների բյուջեների սպասվելիք եկամուտները և ծախսերը:

Ֆինանսական վերահսկողություն

Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 140 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 34 բյուջետային հիմնարկներում, 50 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 15 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 1 ոչ պետական ձեռնարկությունում, 12 հասարակական կազմակերպություններում, 3 քաղաքային և 25 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել են 88,328.7 հազ. դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և

դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 32,357.7 հազ. դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները կազմել են 9,661.7 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 219.5 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 43,372.7 հազ. դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 88,328.7 հազ. դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից և նախորդ տարվա 51,395.9 հազ. դրամի ապառքի գումարներից վերականգնվել/վերաձևակերպվել է 37,642.5 հազ. դրամ, որից պետական բյուջե՝ 26,652.3 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 430.4 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 2,950.4 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 7,609.4 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով տասը հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանություն և երկու հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ Գլխավոր դատախազություն:

Հաշվապահական հաշվառում և աուդիտորական գործունեության կարգավորում

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2013 թվականին կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների անցկացմանը, աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման հսկողությանը:

Հաշվետու տարում մշակվել, ընդունվել կամ ընդունման են ներկայացվել հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

- ԼՂՀ կառավարության 2013 թվականի հունիսի 18-ի «ԼՂՀ կառավարության

2004 թվականի մայիսի 26-ի «ԼՂՀ-ում հաշվապահների որակավորման կարգը հաստատելու մասին» N 201 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 371-Ն որոշումը,

- ԼՂՀ կառավարության 2013 թվականի հունիսի 18-ի «ԼՂՀ կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին» N 15 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 372-Ն որոշումը,

- ԼՂՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 8-ի «Աուդիտ իրականացնող անձանց կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին» N 758-Ն որոշումը,

- ԼՂՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 8-ի «Աուդիտ իրականացնող անձանց կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվության ձևը, այն լրացնելու և ներկայացնելու կարգը սահմանելու և ԼՂՀ կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 16 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 759-Ն որոշումը,

- ԼՂՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 8-ի «ԼՂՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման հսկողության ստուգաթերթը հաստատելու մասին» N 760-Ն որոշումը,

- ԼՂՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի հունվարի 21-ի «ԼՂՀ ֆինանսների նախարարության 2008 թվականի մարտի 4-ի «Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի)» թիվ 34 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 07-Ն հրամանը,

- ԼՂՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի հուլիսի 2-ի «ԼՂՀ-ում հաշվապահների որակավորման քննության հարցաթերթիկում ներառված խնդիրների գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 77 հրամանը,

- ԼՂՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի հուլիսի 2-ի «ԼՂՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի մարտի 3-ի «ԼՂՀ-ում հաշվապահների որակավորման հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 31 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 78 հրամանը,

- ԼՂՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի հուլիսի 2-ի «ԼՂՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի մայիսի 21-ի «ԼՂՀ-ում աուդիտորների

որակավորման հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 72 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 79 հրամանը:

Հաշվապահների որակավորման` 2013 թվականին կազմակերպված 9 քննությունների արդյունքներով որակավորվել է 7 հաշվապահ:

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ որակավորված հաշվապահների քանակը կազմել է 24 հաշվապահ, իսկ որակավորված աուդիտորների քանակը` 8 աուդիտոր:

«Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով ճշտվել և Նախարարության ինտերնետային կայքում է տեղադրվել 2012 թվականի հաշվետու տարվա գործունեության արդյունքներով խոշոր կազմակերպությունների ցանկը: Ցանկում ներառված 49 կազմակերպություններից 46-ը (93.9 տոկոսը) ենթարկվել են աուդիտի:

Տարվա ընթացքում Նախարարությունը հետևողականորեն իրականացրել է հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ:

- ԼՂՀ ՊՈԱԿ-ների լիազոր մարմինների թվով 21 հաշվապահների համար կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, որոնց ընթացքում պարզաբանվել են ՊՈԱԿ-ների ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվապահական հաշվեկշռի) կառուցվածքը և բովանդակությունը, ինչպես նաև հաշվետվություններում արտացոլված տվյալների ստուգման մեթոդիկան,

- Շուշիի շրջանում գրանցված պետական կառավարչական հիմնարկների, բյուջետային հիմնարկների, ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների հաշվապահների համար կազմակերպված սեմինար-խորհրդակցությունների ժամանակ ներկայացվել են հաշվետվությունների տարրերի ճանաչման և հաշվետվություններում արտացոլման մոտեցումները,

- ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների թվով 21 հաշվապահների համար կազմակերպված սեմինար-խորհրդակցության ժամանակ ներկայացվել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները,

- ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների թվով 41 հաշվապահների համար կազմակերպված սեմինար-խորհրդակցության ժամանակ ներկայացվել են «Եկամտային հարկի

մասին» ԼՂՀ օրենքի ընդունման հետ կապված 2014 թվականի ընթացքում արձակուրդային գումարների և անաշխատունակության նպաստների հաշվարկման առանձնահատկությունները:

Ֆինանսական վերահսկողության տեսչության հետ համատեղ իրականացվել են ԼՂՀ Շուշիի շրջանի հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներ:

Աուդիտորական գործունեության կարգավորված ոլորտում Նախարարության կողմից ամփոփվել են աուդիտ իրականացնող՝ գործող երեք կազմակերպությունների ներկայացրած եռամսյակային հաշվետվությունները:

Ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ 2013 թվականի ընթացքում աուդիտերական կազմակերպությունների կողմից կատարվել է 54 պարտադիր և 2 կամավոր աուդիտ, ինչպես նաև մատուցվել են օրենքով չարգելված այլ ծառայություններ:

Իրականացվել է աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման 2 ստուգում, որոնց արդյունքներով իրավական նորմերի խախտումներ չեն հայտնաբերվել:

Գնումների գործընթացի կարգավորում

2013 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից.

- ստուգվել, հաշվառվել և ծանուցում է տրվել մոտ 850 գնման հաշվետվությունների,

- ուսումնասիրվել և հաշվառվել են պետության կարիքների համար 2013 թվականին իրականացվող գնումների պլանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված թվով 237 առաջարկություններ, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ թվով 27 գրություններ,

- գնումների ընթացակարգերի կազմակերպման և անցկացման գործընթացի շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,

- պատրաստվել են գնումների էլեկտրոնային պաշտոնական տեղեկագրում հրապարակման ենթակա նյութեր՝ բաց ընթացակարգով գնում կատարելու թվով 43

հայտարարություններ և հրավերներ, պարզեցված ընթացակարգով գնում կատարելու թվով 82 հայտարարություններ և հրավերներ, թվով 80 նախաորակավորման հայտարարություններ, շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների վերաբերյալ թվով 32 տեղեկություններ,

- ստուգվել և ամփոփվել են 2012 թվականի տարեկան հաշվետվությունները ու պետական կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների կողմից ներկայացված 2014 թվականի գնումների պլանները:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված պահանջների կատարման, գնումների արդյունավետության բարձրացման, գնումների գործընթացի կազմակերպման կարգի որոշ դրույթների հստակեցման ու կատարելագործման, ինչպես նաև տեղական արտադրողների համար նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «ԼՂՀ կառավարության 2011 թվականի մարտի 22-ի թիվ 133-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 28-ին:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի և ԼՂՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Գնումների մասին ԼՂՀ օրենսդրության իմացության գնահատման նպատակով թեստավորման կարգը հաստատելու մասին» թիվ 938-Ն որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով «Գնումների մասին» ԼՂՀ օրենսդրության իմացության թեստավորում է անցկացվել պետական կառավարման մարմինների, ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների և փակ բաժնետիրական ընկերությունների գնումների համակարգողների պարտականություններն իրականացնող մոտ 250 անձանց ընդգրկմամբ:

Գնումների բնագավառում պատվիրատուների մասնագիտական գիտելիքների բարձրացման և կատարելագործման նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով «Գնումների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված պատվիրատուների գնումների համակարգողների համար կազմակերպվել են դասընթացներ՝ մոտ 190 անձանց ընդգրկմամբ:

Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 2013 թվականի ընթացքում ստացվել է մեկ բողոք, որի քննությունից հետո այն բավարարվել է:


Հաշվետու տարում Նախարարության կողմից նախաձեռնվել է մեկ բողոքարկման գործընթաց, որի արդյունքում մեկ մասնակից ընգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 6 ամիս ժամկետով:

2013 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության հետ համագործակցության շրջանակներում Նախարարության ներկայացուցիչները մասնակցել են Եվրոմիության «ՄԻԳՄԱ» ծրագրի և Եվրոպական բանկի կողմից կազմակերպվող սեմինար քննարկումներին: Սեմինար քննարկումների նպատակն էր՝ ԱՊՀ երկրներում Եվրոմիության գնումների վերաբերյալ տիպային օրինագծերի ներկայացումը: ՀՀ ֆինանսների նախարարության հետ փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից կատարված գնումների ծավալը (բացառությամբ գնումների բազային միավորը չգերազանցող, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված և պետական գաղտնիք պարունակող գնումների) կազմել է 9,849.2 մլն դրամ, որից 5,535.2 մլն դրամը (56.2 տոկոսը)՝ մրցակցային հիմունքներով կատարված գնումներն են: Մրցակցային հիմունքներով կատարված գնումների իրականացումն ապահովել է հատկացված միջոցների տնտեսում 74.1 մլն դրամի կամ հատկացված գումարի 1.3 տոկոսի չափով:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ԼՂՀ օրենսդրության համաձայն ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2013 թվականի ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 148 հաշվետվություն, որոնք բոլորն էլ վերաբերում էին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված հաշվետվությունների բաշխումն ըստ հաշվետու անձաց տեսակների ներկայացված է գծապատկերում:



Չճապատկեր. ներկայացված հաշվետվությունների քանակը ըստ հաշվետու անձանց տեսակների (հատ)

Լիցենզավորում

ԼՂՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 128 որոշման համաձայն ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում է «Աուդիտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Շահումով խաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում», «Առևտրի իրականացման վայրի կազմակերպում» գործունեության տեսակների, ինչպես նաև պարզ ընթացակարգով լիցենզավորումը:

ԼՂՀ կառավարության 2011 թվականի մարտի 22-ի N 134-Ն որոշմամբ հաստատված ԼՂՀ գործարար միջավայրի բարելավման ծրագրի պահանջներից ելնելով, ինչպես նաև բարենպաստ գործարար և ներդրումային միջավայր ստեղծելու, տնտեսական ակտիվությունը խրախուսելու և գործարարությամբ զբաղվելը դյուրացնելու նպատակով 2013 թվականին մշակվել են «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքը և դրանից բխող մի շարք ԼՂՀ օրենքների նախագծեր, որոնք ընդունվել են ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 31-ին: Տվյալ փաթեթի համաձայն լիցենզավորման պահանջը հանվել է գործունեության 17 տեսակների համար:

Նախարարության կողմից մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատման են ներկայացվել ԼՂՀ նշված օրենքների ընդունումից բխող ԼՂՀ կառավարության մի շարք որոշումների նախագծեր.

➤ «ԼՂՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի N 128 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որով հստակեցվում է «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը լիցենզավորող ԼՂՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինների ցանկը,

➤ «ԼՂՀ կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի N 36 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «ԼՂՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 27-ի N 165 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշումների նախագծերը, որոնց համաձայն լիցենզավորված անձինք այլևս չեն ներկայացնելու լիցենզավորման վերաբերյալ տեղեկատվություն ԼՂՀ կառավարության կողմից սահմանված պետական մարմիններին, այսուհետ նման տեղեկատվություն տրամադրելու է միայն լիցենզավորող մարմինը:

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի մարտի 6-ի N 30 հրամանով դադարեցվել է գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրության 1 լիցենզիա՝ դիմումի համաձայն:

Լիցենզավորման աշխատանքների շրջանակներում 2013 թվականի ընթացքում Նախարարության կողմից՝

➤ միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը ժամանակին գանձելու համար՝ հաշվետու տարվա ընթացքում հավաքագրվել է մոտ 4.0 մլն դրամ պետական տուրք.

➤ ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը և ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների և գանձված պետական տուրքերի վերաբերյալ.

➤ գումարվել է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 1 նիստ, որը նվիրված էր լիցենզիայի գործողության դադարեցման հարցի քննարկմանը:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ ուժի մեջ են աուդիտորական ծառայությունների իրականացման 3 և պարզ ընթացակարգով տրված. Անասնաբուժության՝ 7, օդու արտադրության՝ 4, մրգային օդու արտադրության՝ 1, գինու արտադրության՝ 15 և ինկասացիոն ծառայությունների մատուցման՝ 1 լիցենզիաներ:

Ֆինանսական շուկայի զարգացում

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ամփոփվել են **ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության** (ԱՊՊԱ) համակարգի գործունեության 2013 թվականի արդյունքները: Հաշվետու տարում ԼՂՀ տարածքում ԱՊՊԱ ոլորտում գործունեություն են ծավալել Հայաստանի Հանրապետության 7 ապահովագրական ընկերություններ՝ 30 իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող գործակալների միջոցով: 2013 թվականին ապահովագրվել է ավելի քան 10.5 հազ. ավտոմեքենա: Այդ ընթացքում 912 ճանապարհատրանսպորտային պատահարի կապակցությամբ իրականացվել է մոտ 143.0 մլն դրամի չափով գույքային և անձնական վնասների հատուցում:

Կենսաթոշակային բարեփոխումների ոլորտում 2013 ընթացքում գումարվել է ԼՂՀ վարչապետի 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 475-Ա որոշմամբ ստեղծված՝ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող կառավարման հանձնաժողովի 7 նիստ, որոնցում նախանշվել են կուտակային համակարգի ներդրման հետ կապված առկա հիմնահարցերը և խնդիրները, մշակվել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը: Տարվա ընթացքում հանձնաժողովի անդամները մի շարք հանդիպումներ են ունեցել Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային բարեփոխումներ իրականացումը համակարգող աշխատանքային խմբի հետ: Կազմակերպվել են խորհրդակցություններ Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ, որոնց ընթացքում քննարկվել են բարեփոխումների իրականացման հետ կապված առկա խնդիրները:

Կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների արդյունավետ կազմակերպման և գործընթացում ներգրավված մարմինների միջև փոխհամաձայնեցված գործողությունների իրականացման ապահովման նպատակով մշակվել և ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է «Կենսաթոշակային բարեփոխումների 2013 թվականի միջոցառումների իրականացումն ապահովող գործողությունների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին» որոշումը:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում մշակվել և ԼՂՀ

կառավարության քննարկմանն է ներկայացվել «Կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող ԼՂՀ օրենքների նախագծերի փաթեթը»: Մշակման ժամանակաշրջանում օրենքների նախագծերի փաթեթը քննարկվել և համաձայանեցվել է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային բարեփոխումներ իրականացնող պատասխանատու մարմինների հետ:

Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով մշակվել և ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է համապատասխան որոշումը:

Նշված որոշմամբ նախատեսված միջոցառումների կատարման շրջանակներում տարվա ընթացքում ապահովվել է մի շարք միջոցառումների իրականացումը, որոնցից են.

- գումարվել է համաժողով՝ նվիրված հանրապետությունում իրանակացվող կենսաթոշակային բարեփոխումների և անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացի լուսաբանմանը, որին մասնակցել են կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում ներգրավված պետական մարմինների, ԶԼՄ-ների, «Արցախի գործարարների (գործատուների) միություն» իրավաբանական անձանց միության և շահագրգիռ այլ կազմակերպությունների (հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, հաշվապահական ծրագրեր մշակող կազմակերպություններ և այլն) ներկայացուցիչները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի ներկայացուցիչները,

- կնքնվել են փոխգործակցության մասին հուշագրեր հաշվապահական ծրագրեր մշակող կազմակերպությունների, հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, աուդիտորական կազմակերպությունների, «Արցախբանկ» ՓԲԸ-ի և Արցախի գործարարների միության հետ՝ հաշվապահական ծրագրերից անձնավորված հաշվարկի (գրանցման հայտի) ձևավորումն ապահովող ծրագրային փոփոխություններ իրականացնելու, անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացնելու գործընթացին աջակցելու նպատակով,

- ներկայացվել են առաջարկություններ ԼՂՀ կառավարությանը՝ անձնավորված

հաշվարկը (գրանցման հայտը) բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ.

- որոշման պահանջների համաձայն՝ մինչև դեկտեմբերի 20-ը նույնականացման քարտեր (էլեկտրոնային ստորագրություններ) ստացած թվով 3105 անձանց համար պետական տուրքի գումարը վճարվել է ԼՂՀ պետական բյուջեի միջոցներից, որը կազմել է 9,315.0 հազ. դրամ, ինչպես նաև մինչև 2013 թվականի դեկտեմբերի 20-ը նույնականացման քարտեր (էլեկտրոնային ստորագրություններ) և ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից օգտվողի անուն ու գաղտնաբառ ստացած թվով 1540 անձանց համար էլեկտրոնային ստորագրությունների 2014 թվականի սպասարկման վճարը նույնպես վճարվել է ԼՂՀ պետական բյուջեի միջոցներից, որը կազմել է 4,620.0 հազ. դրամ:

Տնտեսական քաղաքականություն

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2014 թվականի ծրագրին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է ԼՂՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 28/4 արձանագրային որոշմամբ և պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվել է Ազգային ժողով: Ծրագիրը նպատակ է հետապնդում ընդլայնել ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունները, նորարարական և արտաքին տնտեսական գործունեությունը, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների, ինչպես նաև բիզնես ենթակառուցվածքների ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով կանոնադրական կապիտալում կատարած ներդրումների համար արտոնություն ստանալու նպատակով 2013 թվականի ընթացքում հայտ են ներկայացրել 2 կազմակերպություններ: Նախարարության կողմից ուսումնասիրվել և վերլուծվել է հայտերով ներկայացված փաստաթղթերը, կատարված 1,059.5 մլն դրամ ներդրումներից 931.2 մլն դրամը գնահատվել է որպես փաստաթղթերով հիմնավորված արտադրական նպատակով կատարված ներդրումներ: Ուսումնասիրությունների արդյունքներով կազմել ու Ներդրումները գնահատող և

արտոնություն տրամադրող հանձնաժողովին են ներկայացվել կատարած ներդրումների վերաբերյալ եզրակացությունը և որոշման նախագիծը, համաձայն որի կազմակերպություններին տրամադրվել է 93.1 մլն դրամի չափով հարկային արտոնություն:

Շահութահարկի արտոնությունից օգտվող կազմակերպությունների կողմից տարեկան հաշվետվություններով ներկայացված փաստաթղթերը Նախարարության կողմից ընդունվել, ուսումնասիրվել և ամփոփվել են՝ ԼՂՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

Աշխատանքներ են նաև տարվել պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների, մատակարարվող ապրանքների առավելագույն գների, դրանց հաշվարկման կարգերի սահմանման իրավասությունների հստակեցման և գործընթացի կարգավորման ուղղությամբ: Այդ գների հաստատման միասնական մոտեցում կիրառելու նպատակով Նախարարության կողմից մշակվել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների, մատակարարվող ապրանքների առավելագույն գների (սակագների) հաստատման գործընթացի կանոնակարգման մասին» որոշման նախագիծը, որն ընդունվել է ԼՂՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 228-Ն որոշմամբ:

Նշված որոշման համաձայն 2013 թվականի ընթացքում ընդունվել են մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների, մատակարարվող ապրանքների առավելագույն գների կիրառման վերաբերյալ Նախարարության համաձայնությանը ներկայացված հայտերը: Կատարելով հայտերով ներկայացված հաշվարկ-հիմնավորումների ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ տրվել է 3 պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող՝ թվով 21 ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ Նախարարության համաձայնությունը:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում

Կարևորելով բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի դերը ԼՂՀ տնտեսական աճի և տնտեսական մրցունակության ապահովման գործում՝ Նախարարության գործունեության քաղաքականությունն ուղղված է եղել գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավմանը:

ԼՂՀ կառավարության 2011 թվականի մարտի 22-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված՝ գործարարությամբ զբաղվելու հետ առնչվող վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, փոքր և միջին ձեռնարկությունների աճի խթանմանը, հարկային հաշվետվությունների կրճատմանը և պարզեցմանը, հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն նպատակաուղղված «Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» իրականացման նպատակով 2013 թվականին Նախարարության կողմից աշխատանք է տարվել միջոցառումների կատարման համար պատասխանատու բոլոր գերատեսչությունների հետ, ընդունվել նրանց կողմից ներկայացված հաշվետվությունները, ամփոփվել ու ներկայացվել ԼՂՀ կառավարության աշխատակազմ:

Իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում Նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորմանն ուղղված 2014-2016թ թվականի նոր ծրագրի նախագիծը: Ակնկալվում է, որ ծրագրի նախագծում ներառված միջոցառումների իրականացմամբ կապահովվի Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման շարունակականությունը, հետևողական գործողությունների իրականացմամբ կոյուրացվի գործարարությամբ զբաղվելը:

«Արցախերկսևմետ» ՓԲԸ

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համակարգում գործող՝ «Արցախերկսևմետ» ՓԲԸ 2013 թվականի գործունեությունն ուղղված է եղել ընկերության կանոնադրական գործառույթների իրականացմանը:

Ընկերության իրացման ծավալը 2013 թվականին կազմել է 30.1 մլն դրամ: «Արցախերկսևմետ» ՓԲԸ 2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը ամփոփվել է վնասով:

Առևտրի և շուկայի կարգավորում, որակի ենթակառուցվածք

Հաշվետու տարում **առևտրի և ծառայությունների** ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է եղել ոլորտի գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով մշակվել է «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ու «Տեղական տուրքերի և վճարների մասին» ԼՂՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որն ընդունվել է ԼՂՀ Ազգային Ժողովի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 31-ին:

Սպառողներին մշակութային ծառայությունների մատուցման ժամանակ ձագող հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև սպառողական կրեդիտավորման բնագավառում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունները հստակեցնելու նպատակով մշակվել են «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» և «Գովազդի մասին» ԼՂՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնք նույնպես ընդունվել են ԼՂՀ Ազգային Ժողովի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 31-ին:

Հաշվետու տարում **համապատասխանության հավաստման** բնագավառում իրականացված աշխատանքների թվում հավատարմագրման վկայագրեր են տրվել «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» ՊՈԱԿ-ի կենտրոնական երկրաբանական փորձարկման լաբորատորիային, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի փորձարկման լաբորատորիային, «Ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի սննդամթերքի փորձարկման լաբորատորիային:

Միաժամանակ նախկինում հավատարմագրված «Սերմնաբուծական և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն» ՓԲԸ-ի, «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Մոակած» արտադրական կոոպերատիվի փորձարկման լաբորատորիաներում հսկողության նպատակով կատարվել են պարբերական գնահատման աշխատանքներ:

Ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համապատասխանության գնահատման ոլորտներում իրականացված քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղված է եղել նշված ոլորտների զարգացմանը, սպառողների կյանքի, առողջության պահպանմանը, շրջակա միջավայրի համար անվտանգ արտադրանքի արտադրման և ծառայությունների

մատուցման ու դրանց որակի ապահովմանը:

«Ստանդարտացման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներից ելնելով մշակվել է «Մենդային հավելումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը», որը ընդունվել է ԼՂՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ին N 191-Ն որոշմամբ:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետին համապատասխան՝ մշակվել և ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամաններով հաստատվել են.

- «ԼՂՀ Զբաղմունքների դասակարգիչը» ՀԴ-2009 (12.02.13 թվականի N18-Ն հրաման).

- «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների ԼՂՀ դասակարգիչը» ՀԴ-2009-2011 (12.02.13 թվականի N 19-Ն հրաման).

- «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների ԼՂՀ դասակարգիչը» (12.02.13 թվականի N20-Ն հրաման).

- «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը» (25.12.13 թվականի N128-Ն հրաման).

- «Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչը» (25.12.13 թվականի N129-Ն հրաման).

- «Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչը» (25.12.13 թվականի N130-Ն հրաման):

«Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- տարբեր տնտեսվարող սուբյեկտների հետ կնքվել են 13 պայմանագրեր՝ տեղեկատվության տրամադրման և լաբորատոր փորձարկումների իրականացման նպատակով.

- կատարվել են տնտեսվարող սուբյեկտների կողմից հաստատված տեխնիկական պայմանների 4 փորձարկումներ և 1 վերագրանցում.

- կատարված սերտիֆիկացման աշխատանքների արդյունքում տրամադրվել են տեղական արտադրանքի 53 և հանրային սննդի ծառայության մատուցման 32 սերտիֆիկատներ.

- հսկողության աշխատանքներ են կատարվել նախկինում սերտիֆիկատ տրամադրված արտադրանքի և հանրային սննդի կազմակերպման 48 սուբյեկտների նկատմամբ.

- Կենտրոնի սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի կողմից կատարվել են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացրած արտադրանքների փորձարկում, որի արդյունքում կազմվել և տրամադրվել են 177 համապատասխանության եզրակացություններ: 6-ով ավելացվել է փորձարկման և չափագիտության լաբորատորիաների կողմից կատարվող փորձարկումների ցուցանիշների քանակը.

- լաբորատորիայի 3 աշխատողներ անցել են որակավորում ՀՀ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ուսուցման կենտրոնում և ստացել են համապատասխան վկայականներ.

- լաբորատոր փորձարկումների ճշգրտությունը ապահովելու և որակը բարձրացնելու նպատակով ձեռք են բերվել անհրաժեշտ քիմիկատներ և ստանդարտ լուծույթներ:

Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում հսկողություն

Սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության կողմից վերահսկողություն է իրականացվել հանրապետությունում գործող թվով 81 տնտեսավարող սուբյեկտների մոտ, որից մեկը չէր աշխատում («Ֆորտե» ՄՊԸ, ք.Ստեփանակերտ Ադ. Իսակովի 3), մյուս ութսունում հայտնաբերվել են խախտումներ, մասնավորապես՝ բացակայվում էին ապրանքների համապատասխանության սերտիֆիկատները, որոշ ապրանքների վրա նշված չէին հայերեն մակնշումները, արտադրման կամ պահպանման ժամկետները:

Կատարած ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվել են համապատասխան գրություններ՝ տեսչության կողմից հայտնաբերված թերությունների վերացման մասին:

ԼՂՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 18-ի թիվ 18-Ա որոշման համաձայն՝ տեսչությունը մասնակցել է հացի շուկայում ուսումնասիրություն և դիտարկում իրականացնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացված ստուգումներին:

Սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը մասնակցել է նաև՝

1. «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ հավատարմագրված

լաբորատորիայի պարբերական գնահատման և փորձարկումների ոլորտի ընդլայնման նպատակով գնահատմանը,

2. «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» ՊՈԱԿ-ի փորձարկման լաբորատորիայի համապատասխանության գնահատմանը,

3. «Մոակած» արտադրական կոդպերատիվի գազաբալոնների փորձարկման հավատարմագրված լաբորատորիայի պարբերական գնահատմանը:

Փաստաթղթաշրջանառություն, իրավաբանական ծառայություն և կադրային ոլորտ

2013 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ստացել է 5967 փաստաթուղթ, որից 85-ը` քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթղթերը քննարկվել և ընթացքավորվել են, անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Հաշվետու ժամանկաշրջանում Նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 362 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

| | |
|---|-------|
| ԼՂՀ օրենքներ | - 71 |
| ԼՂՀ Նախագահի հրամանագրեր | - 1 |
| ԼՂՀ կառավարության որոշումներ | - 155 |
| ԼՂՀ վարչապետի որոշումներ | - 119 |
| ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամաններ | - 16 |

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից ներկայացված ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել է դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԼՂՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Ուշադրության կենտրոնում մշտապես պահելով բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը` Նախարարության աշխատողների կողմից իրականացվել են ընդունելություններ ու հանդիպումներ (տարվա ընթացքում` ավելի քան հազար ընդունելություն):

Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լավել և պարզաբանվել են, ձեռնարկվել են միջոցներ դրանց լուծման ուղղությամբ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով մամուլում պարբերաբար հրապարակվել են հաղորդագրություններ:

Պարբերաբար իրականացվել են Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջի (mfe-nkr.am) ընթացիկ տեղեկատվական թարմացման և համալրման աշխատանքները: Կայքէջը պարունակում է տեղեկատվություն Նախարարության գործունեության հիմնական ոլորտների մասին, հայտարարություններ և վիճակագրական տվյալներ, նորություններ և պաշտոնական հաղորդագրություններ: Կայքէջի միջոցով իրականացվում են գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրի հրապարակման, ինչպես նաև մշակված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքները:

Կադրային ոլորտում Նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և փորձի բարձրացմանը: Քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են անձնակազմի 16 ատեստավորումներ:

Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ:

ԼՂՀ 2012-2013թթ. պետական բյուջեների միջոցների հաշվին նախատեսված՝ ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջոցով ֆինանսավորվող ծրագրերի կատարողականը

/ հազ. դրամ /

| Բաժին | Խումբ | Դաս | Բաժնի | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | 2012 թ. | 2013թ. | | | |
|-------|-------|-----|-------|---|--------------------|------------------------|---------------------|--------------------|---|
| | | | | | Դրամարկ-դային ծախս | Տարեկան հաստատված պլան | Տարեկան ճշտված պլան | Դրամարկ-դային ծախս | Դրամարկ-դային ծախսը տարեկան ճշտված պլանի նկատմամբ % |
| 1 | 1 | 2 | 1 | Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը | 246,716.3 | 323,539.6 | 323,539.6 | 265,386.5 | 82.0 |
| 1 | 1 | 2 | 03 | Գնումների պաշտոնական տեղեկագրերի հրապարակման գործընթացի ապահովման և ընդհանուր օգտագործման ձևաթղթերի ու խիստ հաշվառման փաստաթղթերի պատրաստման ծախսեր | 706.0 | 5,000.0 | 5,000.0 | 832.0 | 16.6 |
| 1 | 1 | 2 | 04 | Ապահովագրական վճարներ և փոխհատուցումներ | - | 5,000.0 | 5,000.0 | - | - |
| 1 | 1 | 2 | 05 | ԼՂՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր | 9,120.0 | 20,000.0 | 20,000.0 | 9,120.0 | 45.6 |
| 1 | 3 | 3 | 02 | Պետական աջակցություն «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը | 37,619.8 | 39,383.4 | 39,383.4 | 36,824.5 | 93.5 |
| 1 | 7 | 1 | 01 | Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ) | 1,127,185.4 | 1,699,000.0 | 1,664,000.0 | 1,634,493.9 | 98.2 |
| 1 | 8 | 1 | 01 | Դոտացիաների տրամադրում համայնքների բյուջեներին | 1,570,170.1 | 1,668,727.4 | 1,662,720.9 | 1,540,700.0 | 92.7 |
| 3 | 1 | 1 | 03 | Արտագերատեսչական պահակության պահպանություն | 105,532.6 | 150,000.0 | 110,000.0 | 108,521.5 | 98.7 |
| 3 | 3 | 2 | 03 | Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ենթակա ծախսեր | 46,303.0 | 150,000.0 | - | - | - |
| 4 | 1 | 1 | 02 | Պետական աջակցություն ԼՂՀ «Մտանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը | 7,197.2 | 4,435.0 | 6,435.0 | 6,434.9 | 100.0 |
| 4 | 1 | 1 | 07 | Աջակցություն Արցախի ներդրումային հիմնադրամին | 2,000,000.0 | 2,000,000.0 | 2,000,000.0 | 2,000,000.0 | 100.0 |

| Բաժին | Խումբ | Դաս | | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | 2012 թ. | 2013թ. | | | |
|-------|-------|-----|----|--|--------------------|-------------------------|---------------------|--------------------|--|
| | | | | | Դրամարկ-դային ծախս | Տարեկան հաստատ-ված պլան | Տարեկան ճշտված պլան | Դրամարկ-դային ծախս | Դրամարկ-դային տարեկան ճշտված պլանի նկատ-մամբ % |
| 4 | 1 | 1 | 08 | Տնտեսական զարգացման ծրագրեր | 17,841.1 | 37,000.0 | 5,000.0 | 4,000.0 | 80.0 |
| 8 | 2 | 4 | 02 | Մուրացանի հիշատակի օրվա անցկացման միջոցառումներ | 1,000.0 | 1,000.0 | 1,000.0 | 1,000.0 | 100.0 |
| 8 | 2 | 4 | 03 | Եղիշեի անվան ամենամյա մրցանակաբաշխության ծախսեր | - | 1,000.0 | 1,000.0 | - | - |
| 8 | 3 | 1 | 04 | «Չայն արդարության» ռադիոկայանի պահպանում | 7,144.7 | 7,200.0 | 7,200.0 | 7,102.1 | 98.6 |
| 8 | 3 | 2 | 01 | Պետական աջակցություն թերթերին / «Ազատ Արցախ» թերթ | 72,493.4 | 72,493.4 | 72,493.4 | 72,493.4 | 100.0 |
| 8 | 4 | 2 | 01 | Նյութական աջակցություն ԼՂՀ ԱԺ ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին | 45,000.0 | 45,000.0 | 45,000.0 | 45,000.0 | 100.0 |
| 8 | 4 | 2 | 02 | Պետական աջակցություն հասարակական կազմակերպություններին և ոչ պետական թերթերին | 93,091.0 | 70,000.0 | 70,000.0 | 63,600.0 | 90.9 |
| 8 | 4 | 3 | 01 | Կրոնի բնագավառի ծախսեր | 40,000.0 | 50,000.0 | 50,000.0 | 50,000.0 | 100.0 |
| 10 | 4 | 1 | 15 | Քաղաքացիների խնայողությունների ինդեքսավորման ծախսեր | 40,000.0 | 50,000.0 | 50,000.0 | 50,000.0 | 100.0 |
| 10 | 9 | 2 | 07 | ԼՂՀ պաշտպանության նախարարության համակարգի կենսաթոշակների և այլ հատուցումների վճարման ծառայությունների ձեռքբերում | 49,347.3 | 65,000.0 | 65,000.0 | 50,509.1 | 77.7 |
| 11 | 2 | 1 | 08 | ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական բյուջեից պետական տուրքի վճարումներ | 9,635.2 | - | 17,816.1 | 17,816.1 | 100.0 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | 5,526,103.3 | 6,463,778.8 | 6,220,588.4 | 5,963,833.9 | 95.9 |

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշները

| N/ N | Անվանումը | Չափման միավորը | 2013թ. |
|---------|---|---------------------|------------------|
| 1. | Աշխատողների միջին ցուցակային թիվը, <i>որից` շրջաններում</i> | մարդ <i>մարդ</i> | 130 <i>45</i> |
| 2. | Ավտոտրանսպորտային միջոցների քանակը, տարեվերջի դրությամբ, <i>որից` շրջաններում</i> | հատ <i>հատ</i> | 10 <i>5</i> |
| 3. | Պահպանման ծախսերը (փաստացի) | հազ. դրամ | 265,386.5 |